

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏԱՆԻ

Գրութիւնք եւ
շին տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե ՏԱՐԻ

Ա. ՊՐԻԼ. 14 ՇԱԲԱԹ 1901

ԹԻԻ 208

ԱԶԳԱՅԻՆ

4. ՊՈԼՍՈՅ ԱԶԳ. ՀԻՒԱՆՓԱՆՈՑԸ

Հետագայ բարեկարգութիւնները բացորո
շապէս կը ներկայացնեն Ազգ. Հիւանդանոցի Հո-
գաբարձութեան անխոնջ գործունէութիւնը:

1. — Աշխատող յիմարներու յատուկ 40 ան-
կողիններ պարունակող ննջարանի մը եւ իրեն
յարակից մասերով շէնքի մը շինութիւնը՝ որ
600 ոսկի ծախքով եղաւ:

2. — «Թերիօ—Սիթօն» անուանեալ տաք
ջուր պարունակող կաթնայ մը հաստատուեցաւ ա-
րանց հիւանդանոցին մէջ, որ տաք ջուր կը մա-
տակարարէ ոչ միայն ջրաբուժական սրահին,
այլ եւ արանց հիւանդանոցին, ծերանոցին ու
յիմարանոցի ամէն յարկերուն: Նմանորինակ
կաթնայ մ'ալ կանանց բաժնին մէջ հաստատուած
է ասկէ առաջ:

3. — Արանց հիւանդանոցը օժտուեցաւ ջրա-
բուժական ընդարձակ սրահով մը:

4. — Կանանց հիւանդանոցին եւ աղջկանց
որբանոցին ճեմիշները Եւրոպական դրութեան
վերածուելու շնորհիւ գարշահատութենէ:

5. — Տնօրինութեան սենեակը հեռաձայնի
թելերով կապուեցաւ հաստատութեան զանազան
բաժիններուն եւ յարկերուն հետ:

6. — Հաստատութիւնը ունեցաւ քիմիաբա-
նական—տարրալուծական աշխատանոց մը:

7. — Արանց հիւանդանոցին համար Բարի-
զէն բերուեցան սննդոց բաշխման յատուկ երկու
սայլակներ:

8. — Վիրաբուժական գործողութեան են-
թարկելի հիւանդներու անդամոխութեան հա-
մար մասնաւոր սայլակ մը շինուեցաւ:

9. — Կանանց հիւանդանոցին մէջ վիրա-
դարմանութեան յատուկ խուց մը հաստատուե-
ցաւ:

10. — Մեռելներու տեղափոխութեան հա-
մար մասնաւոր կառք մը պատրաստուեցաւ:

11. — Մոմարանը ընդարձակուեցաւ, կօշ-
կակարութեան եւ սիկարի թուղթի պատրաս-
տութեան համար յատուկ սրահներ պատրաս-
տուեցան:

* * *

— Ապրիլ 4 չորեքշաբթի գիշեր Հիւանդա-
նոցի մատրան քովի տախտակաշէն յարկէն հըր-
դեհ ծագելով մինակ նոյն շէնքը այրած է. Այս
պատճառաւ 250 ոսկիի չափ եղած ֆնասը պիտի
հատուցանեն Ռօսիա, Իւնեօն, Ուսէթէրն, Նօրթ
Պրիթիշ եւ Օսմանլի անուն ապահովագրական
ընկերութիւնք, որոնք ապահովագրած են Հի-
ւանդանոցը եւ անոր յարակից բոլոր շէնքերը:

— Աւտորիոյ Կայսրը՝ Սուլթանի Պուգօվինա
նահանգին մէջ 30 տարիներէ ի վեր Ազգ. վար-
ժարանի երաժշտապետութեան ու տնօրէնի պաշ-
տօնն ունեցող Աղաշա Գաբրիէլ Կըինա անուն աղ-
գայինին Պուգօվինայի նահանգապետին ձեռքով
պատուանշան մը զրկած է ի վարձ իւր յիսնամ-
եայ արժանեաց:

—Պրազիլիայի (Հարաւ. Ամերիկա) Սան-Բաւլօ քաղաքէն «Արմէնիա»-ի կը հաղորդեն թէ Խարբերդցի Յ. Գասպարեան անուն ազգայինը իր գեռահասակ աղջիկը ամուսնացուցեր է իր Պաշտասար անուն . . . եղբորը հետ, որ բաւական դայթակղութիւն պատճառներ է թէ տեղւոյն հայ գաղութին և թէ Պրազիլիացիներու մէջ: Պսակի արարողութիւնը կատարեր է օտարազգի կաթոլիկ եկեղեցական մը, զոր երկու վկաներ խաբած են թէ հարսնացուն ու փեսացուն իրարու հետ ոչ ազգական են և ոչ ալ և է արեւակցութիւն ունին: Պրազիլիական թերթերը այս տարօրինակ ամուսնութեան լուրը հրատարակելով շատ անպաստ բաներ կը գրեն եղբր հայերուն վրայ:

Քաջայոյս ենք որ Ամերիկահայաց Հովուութիւնը պէտք եղածը ի գործ պիտի դնէ այս ատիճան մերձաւոր ամուսնութիւնը լուծելու համար, ամուսնութիւն մը որ քրիստոնէական և ոչ մէկ եկեղեցի, նոյն իսկ մահմետական կրօննալ չը թոյլատրեր:

—Ն. Ա. Բարձրութիւն Լուսինեան Իշխանը հաճեցաւ իր հոյակապ ֆրանսահայ պատկերազարդ բառարանի գնէն 5 ֆր. զեղչել, միմիայն Պուլկարահայ վարժարանաց ուսանողներու գիւրութեան համար, պայմանաւ որ տեսուչներու կամ խնամակալաց կողմէ անոնց ուշիմ ու յառաջադէմ ըլլալին հաստատող մէկ մէկ վկայական պէտք է ներկայացնել մեր խմբագրութեան: Հետեւեալ Պուլկարահայ վարժարանաց ուսանողներու համար նոյն բառարանի Ա. հատորի գինն է 20 ֆր. ոսկի:

Տոպրիչէն մեզ կը գրեն.

«Ս. Պատարագի ահաւոր Խորհուրդը որ Աւագ հինգշաբթի օրուան Տեառն մերոյ Ընթերթին յիշատակն է, և զոր ընդհանուր քրիստոնեայ եկեղեցիք մինչեւ իսկ ամենէն գեղջկականը անթերի կը կատարեն մանաւանդ նոյն օրը, Աւագ հինգշաբթի օրը կըսենք, տեղւոյն եկեղեցւոյն մէջ պաշտօնավարող Հիւրմիւղեան Տ. Գէորգ քահանայն «Ժողովուրդ չը կայ» ըսելով 2Ը ՊԱՏԱՐԱԳԵՑ:

Վշտացեալ մը

(Այս տողերը այցելու հովու Հօր ուշադրութեանը կը յանձնենք):

Սօֆիայէն ալ մեզ կը գրեն.

«Նալբանտեան Գէորգ վարդապետի տեղւոյն եկեղեցիին մէջ իբր քահանայ պաշտօնավարել ուզելը հայ ժողովուրդի մեծամասնութեան բողոքին պատճառ տուաւ, որովհետեւ ըստ Ընդհանրականի օրինաց՝ կուսակրօն քահանայն (վարդա-

պետ) չի կրնար խոստովանութեան պաշտօնը կատարել, նա մանաւանդ երբ նալբանտեան վարդապետին պէս երիտասարդ ըլլալ այդ կուսակրօնը»:

Ճիլիպէէն ալ մեզ կը գրեն.

Գեր. Արսէն Վարդապետ Վեհունիի ծանօթ խնդրոյն մասին դատաւարութիւնը տեղի ունեցաւ և հակառակ կուսակցութեան պատկանող պարոններէն 4ը 7ական օր բանտարկութեան եւ 21ական ֆրանքի սուգանաց ենթարկուեցան: Հետեւեալը ասկէ երկու ամիս առաջ Շարժումի և Ամերիկայի Հայրենիք թերթին մէջ մեծագործ հրատարակուած «ճշմարտութիւնը յաղթանակեց, պատուեցինք զրպարտիչներու և ստախոսներու դիմակները հւայլն» պատառախօսութիւնը ամբողջովին ջուրը կիյնան:

ՍԱԷ

ՕՏԵՍՈՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Տեղւոյն Հայկական Կրթարանի տնօրէն Պ. Կրօն Միքայէլեան չորեքշաբթի օրուան «Իրաւունք»-ի միջոցաւ հրատարակած «Ձեկոյց»-ն օրինակ մ'ալ խմբագրութեան զրկելով կը յայտարարէ թէ Օտեսայի ծանօթ պատուիրակութեան խնդրոյ մասին չպիտի զիջանի պատասխանել Շարժումի խմբագրութեան:

Արդարութիւնը պարտք կը գնէ մեր վրայ խոստովանիլ թէ Պ. Կրօն Միքայէլեան միեւնոյն ընթացքը ունեցած է ասկէ առաջ ալ հանգէպ տեղական հայ թերթերու խմբագրութեանց, որոնք իր վարժարանին վկայաբաշխութեան հանդէսին առթիւ ի նպաստ որբերու անգանակած ֆրանքներուն հաշիւը պահանջեցին հրապտրակաւ:

Արդ, եթէ իրաւ էր որ ծանօթ պատուիրակութիւնը ի ձեռին ունենալով որբեր խնամող (?) առաջնորդական յանձնարարական մը, Օտես գացած եկած էր (հակառակ «Կ. Պոլիս գացած է»-ի տարածայնութեան), այլեւս բացատրութեան պէտք չէր մնար. մեզ համար պատուիրակութիւնը յաշիւած ըսել էր:

Մենք ինչպէս առաջ նոյնպէս հիմա ալ կը պահանջենք Պ. Տնօրէնէն որ վութա՝ իր վարժարանին վկայաբաշխութեանը առթիւ յանուն Հայաստանի Որբերու հանգանակած 40 այսչափ, ինչպէս իւր աշակերտներէն ալ հանգանակած 20 այսչափ ֆրանքներու մասին բացատրութիւն տալ հրա-

պարակաւ Վառնայի Հայ ժողովուրդին, որուն քսակէն ելած է այդ դրամը եւ որ իբր համարառու՝ միշտ իրաւունք ունի այդ հաշիւը Պ. Կրօն Միքայէլեանէն պահանջելու:

* *

Վերջին պահուն Պ. Կրօն Միքայէլեանի կողմէ ստացանք հետեւեալը.

Պատուարժան խմբագրութիւն «Հայելի»
Հարաւարժանութիւն,

«Իրաւունքի խմբագրական գիտողութեան առթիւ կը փութամ յայտարարել ո՛ր, անտեղի և անհիմն է այն վրոյցը թէ ես ուզած ըլլամ շահագործել որբերու անունը հաստատութեանս ինպատարման նուէրներ հաւաքելու գործին մէջ, որ, արդէն շատ սահմանափակ շրջանակի մը մէջ կատարուած է, անշան արդիւնքով:

13 Ապրիլ 1901

ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Վառնա

Հայելի.— Ձեր հաստատութիւնը որբանոց, հիւանդանոց կամ որբերու արհեստանոց է որ ազգայնոց գթութեան կը դիմէք և ձեռք անցուցած գումարնուդ ալ ԱՆՆՃԱՆ անունը կուտաք: Ձէ՛ք մոռած եր ո՛ր ձեր մասնաւոր վարժարանին մէջ գտնուած աշակերտք կանոնաւոր եւ գոհացուցիչ գին վճարողներ են, հետեւաբար անոնց ալ սիրտը վիրաւորած չէ՛ք ըլլար երբ «հաստատութեանս ի նպատակ դրամ հաւաքեցի» կըսէք:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Տէր խմբագիր,

Ներկայիս կը խնդրենք որ հաճիք ձեր մօտակայ թիւերէն միոյն մէջ անկիւն մը շնորհել մեր հետեւեալ քանի մը տողերուն:

«Ինչպէս յայտնի է, Պ. Պաղտատար Թովաննէսեանի տեղական թերթերու մէջ հրատարակած մէկ նամակին առթիւ Պ. Գալուստ Պօղոսեան հրապարակաւ առաջարկեց անոր քանի մը շեզօք անձնաւորութիւններ հրաւիրելով ընկերական ժողով մը կազմել, որպէս զի իր քանի մը վկաներով հոն որոշուի թէ «ինչ է վանցի Պաղտիկ մը, եւ որչափ կարողութիւն ունի հասկնալու մեր ազատագրութեան գործը, որուն ջերմ պաշտպանն կուզէ հանդիսանալ»:

Պ. Պաղտատար Թովաննէսեան սիրով ընդունելով այս առաջարկ, իր կողմէ ընկերական ժողովի անդամ

գորգեց Թափոք Ազապար և Կ. Հարահիւսեանց, իսկ Պ. Գալուստ Պօղոսեան ընտրեց Մուրատ Երանոսեան և Պ. Քիւրքեան. այս չորս անձնաւորութիւններ իրենց ընկեր հրաւիրելով Պ. Արսէն Արսլանեանը կազմեցին ընկերական ժողովը:

Ընկերական ժողովի ներքոյ ստորագրեալ անդամքս ապրիլ 8ին գումարեցինք ժողով մը, ուր հրաւիրուեցաւ խօսիլ նախ Պ. Գալուստ Պօղոսեան, որ կարգ մը ամբաստանութիւններ ըրաւ Պաղտատար Թովաննէսեանի մասին ու ցոյց տուաւ շարք մը նամակներ, որոնցմով կ'ուզէր հաստատել իւր ամբաստանութիւնները: Յետոյ խօսեցաւ Պաղտատար Թովաննէսեան որ նամակներով և ալ փաստերով ուզեց ջրել իր մասին եղած ամբաստանութիւնները:

Ժողովս Գալուստ Պօղոսեանի կողմէ բերուած երկու վկաներն ալ լսելէ ու երկու կողմէ ներկայացուած նամակները ուշի ուշով բնեղէ յետոյ, միաձայնութեամբ բողոքովին անհիմն և հետեւաբար իրականութենէ զուրկ գտաւ Պաղտատար Թովաննէսեանի մասին եղած ու լսած ամբաստանութիւնները, ու որոշեց բնութեան արդիւնքը հրատարակութեան տալ տեղական լրագրաց մէջ ի գիտութիւն ժողովրդեան:

Վառնա 10 ապրիլ 1901

Անդամք Ընկերական ժողովի

Կ. ՀԱՐԱՀԻՍԵԱՆՑ

ԱՐՍԷՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ

Պ. ՔԻՒՐՔԵԱՆ

ՅԱԿՈԲ ԱԶԱՊԼԱՐ

Ծանօթութիւն. — Պ. Գալուստ Պօղոսեանի կողմէ ընկերական ժողովիս անդամ ընտրուած Պ. Մուրատ Երանոսեանն ալ ներկայ էր ժողովին և ամեն կէտի մէջ համաձայն մեզ հետ՝ ստորագրեց ժողովի արձանագրութիւնը, սակայն սոյն նամակը ստորագրել մերժեց:

ՆՈՅՆՔ

Բոժ.— Անշուշտ խաթրը չկոտրելու համար:

 Հրատարակուեցաւ «Այինէի Լէթայիֆ»ի Վեցերորդ տետրակն ալ: 20 տետրին բաժնեգիրն է Պուկարիոյ համար 2 ֆր. արտասահման 2ու կէս ֆր. կանխիկ:

Ի. Գ. ՀԻՆՏԼԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուկարեռէն լեզուի

Գին 1 ֆր.

Դիմել Հայելիի խմբագրութեան:

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Յառաջդիմութիւն. — Պուկարահայ վարժա-
րանները:

Կանխիկ. — Ապառիկ-վերեսի. օրինակ լը-
րագրաց բաժնեգիրները:

Քաջալերութիւն. — Հայերէն չէ:

Նախանձ. — Գլուխէն մինչեւ ոտքը զուտ
հայերէն բառ մը:

Անձնուիրութիւն. — Տես հին աղագաց պատ-
մութեան մէջ:

Ճշմարիտ. — Անունը կայ, ինք չկայ:

Սուտ. — Անունն ալ կայ ինքն ալ կայ, կը
գտնուի ամեն տեղ:

Ամենակարող. — Երբեմն Աստուծոյ ստորոգե-
լիքը որ հիմա կը տրուի դրամին:

Գեղեցկութիւն. — Անցագիր սիրոյ:

Իմաստակութիւն. — Հրապարակին վրայ էն
շատ քշուած ապրանքը:

Առաքինութիւն. — Է բոյս ինչ ատելի:

ՔԼԻԹ

Ծ Ի Ծ Ա Ղ

Պարտապահանջ եւ Պարտատէր

Պարոն Ս. կընդունի իր գլխաւոր պարտա-
պահանջին մէկ այցելութիւնը:

Պ. Ս. — Կը խնդրեմ, մինչեւ միւս ամսուսն
15ը համբերեցէք: Եւ, եթէ այն ատեն չվճա-
րեմ, ձեզի թոյլ կուտամ ըսել թէ ես պաքախճի
մըն եմ:

Պարտապահանջը. — Սիրելի պարոն, այսօր
պատուաւոր մարդ մը ըլլալով երբ չես վճարեր,
ամսուն 15ին պաքախճի ըլլաւ նէ այն ատեն
ինչպէս պիտի վճարես:

— Ո՞րչափ ատեն Բարիզ կեցար, հարցուցին
օրիորդ Ս. . . ի:

— Շաբաթ մը միայն:

— Եւ ա՞յդքան քիչ ատենուան մէջ ամէն
բան կրցա՞ր տեսնել:

— Անշուշտ, որովհետեւ երեք հոգի էինք:
Մայրս կերթար թանգարանները եւ եկեղեցի-
ները կայցելէր, ես արձանները ու թատրոննե-
րը, մինչդեռ հայրս սրճարանը կը նստէր տեղ-
ւոյն բարքերը ուսումնասիրելու համար:

Տիկին Խ. նոր սպասուհի մը առած էր ամ-
սական 60 շրուշի եւ հագուեցնելու պայմանով:

Առաջին օրն իսկ տեսաւ որ ժամը 9 եղած
էր ու տակաւին յորեկը անկողնէն չէր ելած,
տիկինը քովը գնաց ու երբ հարցուց պատճա-
ռը, աշխիւր միամտութեամբ պատասխանեց:

— Ինծի ըսիք որ պիտի հագուեցնեմ, Ձեզի
կը սպասէի:

Մարդակազմութեան դասին:

Ուսուցիչը. — Երբ օրինակի համար, կռնա-
կիդ կից մը զարնեմ, ո՞ր մկանունքներդ են որ
շարժման մէջ կը դրուին:

Աշակերտը. — Այ՛ ձեռքիս մկանունքները,
Ձեզի ապտակ մը փակցնելու համար:

Մարդ մը որ ալ ինքզինքը զոչութեան
տուած էր, օր մը իր հին բարեկամներէն մէկուն
կը հանդպի, որ իրեն կը հարցունէ թէ ի՞նչ գոր-
ծով կը զբաղի:

— Լաւ յանձնարարութիւններու շնորհիւ
կրցայ վերջապէս պանքան մտնել:

— Ե՞րբ:

— Գիշերը . . .

ՍԻՐՏԸ ԵՐԱԾ ԱՐԱՄՆԱԶՈՒԻԿ ՄԸ

(Շարունակութիւն)

Գլխու ցաւ չտամ, որոշեալ օրը նորէն ճիտը
տակը մնալիք Տիշտիս ելայ դացի: Ախ, ախ,
մի մեղադրէք զիս: Պաքուի նաւթահորերուն
պէս՝ սիրտս ու հոգիս վառած է:

Նստայ թիկնաթուին վրայ տալով վայր-
կեան յետոյ՝ հանդիսաւոր արարողութեամբ բան
մը առաւ բերաւ:

Կարծես՝ մեռելական կ'ախքի մը գանկէն
հանուած մխրաղոյն կ'զակ մ'էր, մեղրամոմի վը-
րայ կարգաւ շարուած եւ հապար ու մէկ հոտե-
րով շաղախուած ահագին զանգուած մը՝ զոր ըս-
կաւ բերնէս ներս խոթել, Հրեց, հանեց, շիտ-
կեց, նորէն հանեց, սկսաւ ակունքները փոխել —
«Աս պզտիկ է, անիկա մեծ եկաւ, հիմա գի՛ր
նայիմ, հա՛ շէօյլէ, աղէկ է եա՛: Ատամ, հասըլը
ես աս զէնահաթը մէկտեղ պիտի տանիմ վէստէ-
լամ (սճապա բնաւ ծնած չըլլայիր նէ օրի՛ն
խաթըր կը մնար)», Ձերկալեմ, այս տան շանքէն
յետոյ՝ չորս օր ալ թափառական շրջելէ վերջ,
բնաւ մտքէս չելլար, շաբաթ իրիկուն մ'էր, ե-

լայ գացի որպէս զի վարպետին շինած արհեստական ակռաները գնելով վերջ գտնեն կրած տառապանքներս, որով նոր աշխարհ եկած մարդու մը անճառելի երանութիւնը պիտի վայելէի: Ո՛վ յուսահատութիւն, ո՛վ կոտորելիք մատուցներ, ո՛վ չորնալիք լեզու, ո՛վ քա՛ր ծնելիք արարած...

Խօսքս շարունակելէ առաջ, ձեզի բան մը պիտի ըսեմ:

Դուք աղնիւ ընթերցողներ և ընթերցող հիներ Հայերի, շատ ու շատ իրաւաբա պիտի առարկէք ինծի՝ ըսելով. — «Պէ ա՛յ էֆէնտիմ, հասկցա՛նք, ակռաներդ չիւրիւկ էն եղեր տէ, գացեր սա կամ նա տիշտին քաշել տալով նոր թախըմ մը շինել տուեր էս, ամա, մարդը քիչ մը չօլփաղ ըլլալուն, չինածը քիթը բերանը դարձուցեր է: Ատոր համար էլ այէմին գլուխը ուռեցնելուն տեղը կա՛յ: Հիշ սայլը սաղանախ չունի՛ս գուն, պէ մարդ Աստուծո՛յ»:

Շատ իրաւունք ունիք, սիրելիք Աստուծո՛յ, սակայն յիշեցէք որ, տէրտի մարդը մտիկ ընելուն ալ Քրիստոնէական գերազանց առաքինութիւն մըն է: Ասկից դատ, իմ տուած դիտու ցաւուս մ:՛ջ՝ ձեզի համար փորձառութեան մեծ դաս մը, եւ իմ էրած միկած սրտիս համար ալ պատուական շնորհակալութիւն մը կայ:

Հիմա, շարունակենք, բայց խօսքերնիս ու՛ր մնաց: Հա՛, շաբաթ իրիկուն մէք, կըսէի, ելայ, վայ գլխուն մ:՛ջը ըլլալիք հեղարիֆէնթ տիշտիս գացի: Ալ ուրախութենէս տեղ մը չէի սղմեր: Միայն չմոռնամ ըսել որ, բոլորովին նիհարցած ու կերպարանափոխ եղած էի. ինչու որ, շաբաթներով ակամայ ծուապահոլութիւնը իրիկներս քամած էին: Եւ արդէն կերածս ինչ էր որ. երկու տարու պէպէքի պէս՝ մահալլէպի, կաթ, մսի շուր, նորէն մահալլէպի, նորէն թիրիթ, էյ առամ, ալ գանեցայ, զգուցայ:

Միայն թէ՛ բան մը կերած ատենս ամենեւին հայելիին մէջ չէի նայեր, գուշակելով ճուռճինա, միմոսական ու ծաղրելի պատկերս զոր սկսած էի ունենալ՝ այս պատուհան հէրիֆին գիւմաղը ելած աղետալի եւ անձեռալ օրէն ի լեր: Գլխու ցաւ չտամ, ելայ գացի, նստայ թիկնաթոռին վրայ, որ ալ եւս ինծի համար տանջանաց գործիքի մը սարսուռը կաղզէր: Վերջապէս հազար ու մէկ նազանքներէ յետոյ, երկու շաբա ակռաները առաւ բերաւ: Նախ գարշելի տպաւորութիւն մը ըրաւ վրաս՝ կաս կարմիր քաղցրահամ անճուռի գոյնը: Ախ, այն ի՞նչ սոսկալի վայրկեան էր, ահա այդ պահուն ամենէն աւելի խորապէս զգացի թէ՛ ի՞նչ անփութարիներ զանձ մէկ եղեր բնութեան պարգեւած բարիքը: Բայց ի՞նչ ընէի, պաշա կեղէն չէքիւր:

Անշուշտ տեսած էք որ, փախալիւսները, խօսակողարտի ծախողները կամ թահինները, բուն նիւթը կշռելէ առաջ, գալալիադի (չախալ քար) մանր կտորուանքներով, նախ եւ առաջ պնակին կամ քեասէին տառան կտուներ: Ես ալ, հաւատացէք, անանկ մը եղայ որ, կարծես թէ բերնիս մէջ ափ մը գալալիադի կտորուանք լեցուած էր:

Երկար բարակ փորձեր ըրաւ. հանեց, քիչ մը տաշեց, նորէն չեղաւ, նորէն քերթեց, դարձեալ տեղաւորեց: Բայց եկու տես որ՝ լինտերս ցաւ մէկ տուին, ձայնս ահաւելի կերպով փոխուեցաւ: Երեւակայեցէք որ՝ հացի խոշորկեկ կեղեւ մը կոկորդնիդ մնացած ըլլայ, ի՞նչ խռպոտ անճուռի ձայն որ կուներնայ մարդ, ես ալ ճիշդ այդ վիճակին ենթարկուեցայ: Սկսայ իրաւացի դիտողութիւններ ընել, — «Այս կողմը շատ կը յիմէ կոր, աղիէն լեզուս կը խածնեմ կոր, վերի կողմը նեղ կուգայ կոր, թափանք թուլ մնաց, գետնայարկը կերերայ կոր, եւայն եւայն»։ Ասոնց ամենուն ի՞նչ պատասխանէ նէ կը հաւնիք, — «էֆէնտիմ, կեցի նայինք հէլէ, քանի մը օր գործածես նէ կը վարժուիս. լաքին վիրա թափանդ ծծէ քի տեղաւորուի տէ՛ պոյնուզի պէս փակի: Սանկ մէյմը էլ այնան նայէ, մատուներս սիրեմ, պէ՛, պարէ գնա սայէէս անթիքա ակռա մը գործածէ. լաքին սա ալ չմոռնաս քի, ես մեռնիմ նէ ինծի շատ պիտի փնտռէք»։ Ախ, արդեօք պիտի անսնեմ այդ երանելի ժամը, ո՛վ մարդապատկեր ճիւղ, ո՛վ չօլփաղներուն քէթխիւտան, ո՛վ նապանտներուն ուստա պաշին, ո՛վ ատամնակործան հէռկէլէ, ո՛վ աւերակաց ճարտարապետ, ո՛վ սպանդանոցի տնօրէն, հէմէն ամերով առած փարաներդ՝ մոռութիւններու, տէրտէրներու եւ մէղարճիներու խըսմէթ ըլլայ: Ան ի՞նչ սեւ օր, սեւ սահաթ է եղեր որ, մայրդ չամշնալով՝ մարդ տէյի քեզի աշխարհ բերեր է: Նալլէթ ըլլայ, արդէն ծնիւղդ փորձանք, գոնէ մարդու հետ զբաղելու տեղ, սիրելիք ըլլայիք էջերու հետ ապրէիր, մեռել թաղէիր, եւ տիշտի անունը մէջտեղ գնելով՝ ինծի պէս զովալլը մարդոց չորս ու կէս փոտած ակռային էճէլը չմոռնայիր, ո՛վ ոսթարի, ախ, բարկութենէս վէրէմ պիտի ըլլամ:

Վերջապէս, վախօններով ու պալեաներով պօշ խօսքերու հեղեղի մը տակ զիս լոլողեց, կոկորդեց ու ճամբու դրաւ: Ես ալ, վայ նաչար, կակուղիկ ոսկիները հաւրեցի եւ դուրս ելայ (հառամ զէհիր ըլլայ հէմէն): Բայց ամենէն աւելի ծանր ու դժուարին կուգար ինծի... — ամէն մեղքիս վրայ շնորհակալութիւն ալ յայտնել իր տիպար Զօլփաղութեան, որ բերանս

չէնքէ շնորհքէ հանելով՝ Գառըրղա-Իլիմանին
դարձուցեր էր :

Չերկարեմ, քէօչէ պուճախ տեղէր սըլըքա-
լով ինքզինքս տուն ձգեցի: Եւ ահա պտըտիկ
լաճերս, խաղալով խնդալով զիս շրջապատեցին:
Սակայն, ձայնիս անօրինակ եւ այլանդակ փոփոխու-
թիւնը, նա մանաւանդ ակռաներուս բազխումէն
յառաջ եկած չըթռուակը լսելով, չարաճճիները
սկսան պօռալ:

—Հայրիկ, աքիտէ չէքէրի կուտես կ՛ըր, ես
ալ կ'ուզեմ, ես ալ կ'ուզեմ:

Վայ գլխուս, աքիտէ չէքէրին էր պակաս:

Խօսելու անգամ կարողութիւն չունէի, ուս-
տի աչքովս նշան ըրի կնոջս, որպէս զի լակտները
համոզէ եւ հեռացնէ քովէս: Բայց եկու տես՝ որ
մէկը պէտք էր կնոջս խնդալուն չափ ու սահման
մը դնէր. քանի՜ խօսելս լսէր քանի՜ ակռաներուս
չըխչըխաբանութեան ձայնն առնէր՝ ջիզճրուն
դպելու աստիճան խնդալէն կը մարէր կ'իյնար:
Հապա խոհարար վարպետը, սա խըռֆած հէրի-
ֆին ալ մէրամ հասկցնելու էր: Անո՛ր ալ մէրագ
եղեր է:

—Մօ՛՛՛ ճանըմ, էսա մեր աֆանտին ինտո՛ր
լաֆ կ'անի, քնթիւն մէջ ետփու՛ կայ, իսկէլէ՛ մի
խուռմիշ արեր ին, նաւըլ շէյ տիւր, ախլըմ
եէթմէշ քի:

Յաջորդ օրը խօքը կնոջս ուղղելով.

—Խանըմ, աֆ կ'անես, ճանըմ, առ մեր ա-
ֆանտին ինչ ա էղէլ, լեզուին տակ տօլամա՛ կայ,
կըռթլաղունտա քէմիւք միւ զալմըշ, ինչ ի,
լախուռուսընտան պիր շէյ աղնամամ քի, Խա՛՛՛շ,
ծօ՛, ճանըմ, եէմէլս տէ եուտամաղ:

Բու՛՛՛հ, աս սեւ օրերը պիտի տեսնեմ եղեր
հէ: Ասանկ օխտը մահալլէցիին, ածէմին չափէ-
մին առջեւը, պատառ մը լաճէն սկսեալ մինչեւ
զառամեալ ու խըռֆած հէրիֆին առջեւը քէփա-
զէ՛ պիտի ըլլամ եղեր...

(Շարունակելի)

ԳԻՄՄԷՆ

ՏԵՂԵԳԻՐ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Փ. Պոլիս

Այցելու հովիւը հեռադրաւ աճէլէ թէրթիպ

Շումլա կանչուեցաւ, տէր Յովհան քահանայի
շնորհիւ տեղացի ազգայնոց մէջ յառաջ եկած
յուզումը հանդարտեցնելու համար:

Բարիզ

Աչուընիս լոյս, կերեւի թէ հնչակեանութիւ-
նը իր թուը պիտի տեսնէ «Վեր-Վերակազմեալ
Հնչակեանութիւն» անունով: Այժմէն երեւոյթ-
ները կը հաւաստեն անոր մօտալուտ ծնունդը:

Բոժ.—Հաշիւը չի մոռնանք, ասով 10րդ կու-
սակցութիւն պիտի ըլլալ. հա՛ լայրէթ հա՛, տիւ-
զիւնան թամամցունենք:

Ամերիկա

Տեղւոյս թուրք դեսպանը ի նշան գոհունա-
կութեան մեծ հացկերոյթ մը տուաւ երբ իմա-
ցաւ թէ հայ յեղափոխական երկու կուսակցու-
թեանց ներկայացուցիչներ Հայաստանը ազատե-
լու համար սկսած են... զիրար ծեծել ու ա-
քացել:

Ուլիցա Սօֆիա

Աստանդաշըշիլը լացի գիշերը տուած քա-
րողին մէջ սանկ ըսաւ, «Հայր, Որդի և Ս. Հոգի,
բայց ո՛ւր է որդին. հա՛, այո՛, մատնուեցաւ յու-
գայէ մը 30 արծաթի, գոնէ 30 նաբոլէօն ըլլար,
ի՛նչ է նէ»:

Ժողովուրդէն մէկը.—Բայց վարդապետ, նա-
բոլէօն չկար այն ժամանակ: (Ընդի՛ ծիծաղ):

Աւագ շաբաթ իրիկուն ալ բեմը ելնելով, «Ժո-
ղովուրդ, Քրիստոս գտնուեցաւ» պօռաց: Այս
գտնուեցաւ ըսող ազգայնոց մէջ արձագանդ դը-
տած ըլլալով, հիմա իրարու հանդիպողներ փո-
խանակ բարեւ ըսելու՝ «գտնուեցաւ» կ'ըսեն և
«գտնուեցաւ» պատասխանը կ'առնեն:

Գամշաթքա

Մեռելոցի օրը մէկ քանի տիկիններ գերեզ-
մանատան մէջ պողացին թէ՛ «Տէրպապա պա-
յաթ էօլիւլէրի պրագսըն տա կէլսին թազէլէրի
օգուսուն»:

Անդիէն մարդ մը.—Մօրու, ֆասուլխա՛ մը
հաշլաթաճադսընը քի թաղէսինի պայաթընը
արաեօրսունուղ» պօռաց եւ հոն գտնուող բոլոր
լացող դէմքերը խնդացուց:

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (15)

ՌԸՆԷ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՆԱՐԾԻՐ-ՄԱՄՈՒՆԵ)



Այս երեք փողոցներուն մէջն է որ չինացի վաճառականները ունէին իրենց վաճառատունները: Իրիկունը կը ձգէին զանոնք՝ բաղաճ գառնալու համար:

Այդ անձուկ միջոցին մէջ, ամեն տարի հարիւրաւոր միլիոն գործ տեղի կունենար, թէեւ հիւսիսային քաղաքներուն բացումը քանդոնի նախկին առեւտուրին վնասած ըլլար մասամբ:

Անգլիական գործադատունը, այն պահուն ուր տեղի կունենայ մեր պատմութիւնը, ամենէն կարեւորն ու ամենէն փայլունն էր:

Իր ընդարձակ վաճառատունները ունէին իրենց բնանմատոյցներն փոքր խորշի մը վրայ ուր կուգային պարպուիլ քաղաքին ջրանցքներուն ջուրը, չորս մեծակառոյց օթէլներուն ետին, որոց վրայ բրիտանական դրոշմը կը ծածանէր:

Սօլ-Պրոտէի և Ի-Թէի գատապարտութեան յաջորդ օրը, առտուան ժամը վեցին մօտ, չորս անձեր հաւարուած էին այդ ապարանքներէ մէկուն պատշգամբին վրայ:

Արեւին ճառագայթներէն պատսպարուած վրանով մը որուն կիսբաց վարագոյրներէն կրնային վայելել շքեղ բանաւածան որ իրենց աչքին առջեւ կը պարզուէր, անոնք չէին մտածեր սակայն բրինձի արտերուն վրայէն և արմաւենիներուն մէջէն փնտռել մեհակներուն լուսաշող տանիքները հորիզոնին մօտ, և քանդոնի նաւահանգստին հետաքրքրաշարժ տեսարանը, իր ծաղկեղաւր նաւերովը, հազարաւոր մակոյկներովն ու պատերազմական ծանր ցականակներովը, շատ քիչ կը հետաքրքրէր զանոնք:

Այս անձերն էին. նախ մեր առջի օրուան ծանօթը, Բերքինս նաւապետը, Չինաստանի ծովերուն ափիոնի ամենէն ճարպիկ մաքսախոյսներէն մէկը. Պ. Լօթէր, քուիցերցի մը, որ առաջին անգամ Եայրագոյն Արեւելք ներմուծած էր ժընէվի ժամագործութիւնը և ազւոր հարստութիւն մը կը պարտէր այս առեւտուրին, շնորհիւ երկու ժամացոյց կրկու սովորութեան զոր այն ամեն ամեն պերճասէր Չինացի ունէր: Տիկին Լօթէր, իր կինը, փափուկ ու խառնիշաղկաւ արարած մը, որուն

համար քանդոնի մէջ բնակիլը ճշմարիտ աքսոր մըն էր. վերջապէս Սըր Արթուր Մըրրէյ, մին այն արտակարգ անգլիացիներէն որոց մարդ անպատճառ կը հանդիպի աշխարհիս չորս կողմը, հոն ուր վտանգ մը կայ, այցելելիք, ծախելիք կամ գնելիք բան մը կայ:

Սքանչելի նաւազ ինչպէս իր ցեղին բոլոր աշխուհականները, հարուստ բայց սեւամաղձոտ, սըր Արթուր օրին մէկը Բերքինսին հանդիպած էր Պէնկալի կայաններէն մէկուն մէջ և խնդրած էր անկից սր իր նաւուն մէջ առնէ զինքը:

Ապահով ըլլալէ ետք թէ իր մօտ պիտի ունենար ախորժելի մարդ մը և տոկուն ընկեր մը, նաւապետը ընդունած էր այս տարօրինակ պայմանը և մօտ երեք տարիէ ի վեր Սըր Արթուր Մըրրէյ բաժնուած չէր անկից:

Թէեւ բնաւ չէր շահագրգռուեր առեւտրական գործողութիւններու, զուարթօրէն ընդունած էր սակայն ամենաշահաւոր արհեստի մը վտանգները, որուն մէջ հաւանականութիւն կար սպանուելու կամ կախուելու:

Արգարեւ յաճախ կը պատահէր որ այս առեւտուրը կատարող թեթեւ նաւերը Մարգարիտներու գետաբերանի ծովահաններուն ձեռքէն խոյս տային իյնալու համար մաքսային նաւերու մէկ ծուղակին մէջ, եւ ասիկա հակառակ այն գողտնի պայմանագրին զոր ամեն խելացի և ռոմիւրութեանց գիտակ մաքսախոյս անպատճառ կը կնքէր՝ ափիոնի ներածումը արգիլելու պաշտօն ունեցող մանտարէնին հետ:

Այս կարեւոր անձնաւորութիւն կը բնակէր Մաքսօ-Քանդոնի կէս ճամբուն վրայ, գետեզրը, Պօքքա-Թիկրիս ըսուած տեղը գտնուող գեղեցիկ ամարանոց մը: Ոչ մէկ օտար նաւ չէր կրնար անկից վեր ելլալ առանց անոր արտօնութեանը, առանց կանխապէս յայտնելու իր վաճառքին տեսակը և առանց մաքսատուրքերը վճարելու:

Արդ, ափիոնը բացարձակապէս արգիլուած ապրանք մըն էր. երկրին մէջ անոր ներմուծումն աւելի չիւրացնելու համար յանգուգն մաքսախոյսները պարզապէս կը յայտարարէին մանտարէնին առջեւ թէ իրենց նաւը բնացուած էր բրինձով եւ ուրիշ օգտակար նպարեղէնով, և որովհետեւ նախ եւ առաջ այս անհաւատարիմ պաշտօնատարին վճարած էին շատ խոշոր գումար սը, սա աչք կը գոցեր: Այդ արագընթաց առաքատանակները, զորս Չինաստանի մէջ Օքիուան Բըրքըրը կը կոչէին, եւ որք սպառազինուած էին, այն տեսն առանց դժուարութեան կանցնէին Պօքքա Թիկրիսի կայանէն:

Իրաւ է թէ երբեմն կը պատահէր որ այս կաշառակեր պաշտօնեայ կրկնակ գիր մը կը խաղար, այսինքն խարիչէ ետք իր կառավարութիւնը, յանկարծ եռանդի տագնապէ մը կը բռնուէր եւ շիտակ կը յարձակէր այն նաւերուն վրայ որոց անցքը ինքն իսկ դիւրացուցած էր: Քանզոնի գետակը այս պարագային մէջ տրիւնայի պայթարներու թատերաժայրը կըլլար:

Այլ տեսնուի թէ այն ժամանակ ամեն բան վարդազոյն չէր անոնց համար որ ափիոնի առուտուր կընէին Չինաստանի մէջ:

Չինու Կոյսեր հրովարտականներուն ափիոն ծխողներու գէմ գրեթէ մոռցուած էին, վասն զի միմիայն Քանզոնի նաւահանգստին մէջ աւելի բան բսան հանրային հաստատութիւններ կային ուր Երկնայինները, ահաւելի թմրեցուցիչին մոլինները, կընային ըստ հաճոյս քինովաւ, բայց ատեն ատեն, իրենց պաշտօնը լրջօրէն կատարելու երեւոյթով, հանրային ապահովութեան պետըն ու Պօքթա—Թիկրիսի պահապանը կը համաձայնէին, եւ շատ անգամ մաքսախոյս մը իր կամ իր նաւաղներուն կեանքը կը զոհուէր այս համաձայնութեան:

Ասիկա էր որ բաշխարտ Բերքինս իր բարեկամներուն կը յիշեցունէր անպիտան քործակալատան պատշգամին վրայ, երբ իր ծառան եկաւ ծանուց թէ չինացի կին մը զինքը կը հարցունէր:

—Չինացի կին մը, ըսաւ տիկին Լօթէր ժըպակով:

—Օ՛հ, մի՛ կարծէք որ բարեբաւտ դիպուած մըն է, սիրելի բարեկամուհիս, պատասխանեց նաւապետը, հրաման տալով որ վեր բերեն այցելուհին: Այս կին պարզապէս մայրն է այն դժբախտ աղջկան որ երէկ մահուան դատապարտուեցաւ իր զարմիկին հետ: Այն ապուշ Մէնկը համոզուած է թէ աղջիկը սպանած կամ գէթ սպաննել տուած է իր ամուսինը:

—Մայրը ինչ կուզէ, հարցուց Պ. Լօթէր իր կնոջ շափ զարմացած:

—Կուզէ որ գտնեմ Լէնկի սպանիչը:

—Դո՛ւք:

—Ես ինքս: Եւ որովհետեւ համոզուած եմ իր աղջկան անմեղութեանը վրայ, ապահով եմ որ ապացոյցը պիտի գտնամ:

—Բայց, հրամատար, ի՞նչ շահ ունիք ձեռնարկելու այդ յոյժ վտանգաւոր գործին որուն արդիւնքը տարակուսելի է: Մէնկը, զոր երկար ատենէ ի վեր կը ճանչնանք, ապուշ մըն է, գիտեմ բայց վերջապէս մեր օտարականներու գիտնալիք բանը չէ, եւ կարծեմ թէ չինական արգարութիւնը գէշ աչքով պիտի դիտէ ձեզ իր գործերուն մէջ:

—Ի՞նչ շահ, սիրելի Լօթէրս: Նախ եւ առաջ ի սէր մարդասիրութեան. անկից զատ, Սըր Արթիւրին հարցուցէք, որովհետեւ թերեւս Լէնկի որդւոյն սպանչին ետեւէն իյնալով պիտի փրկեմ եւրոպական գաղթականութիւնն ու մեր առեւտուրը, որ հիմակ ձեր կարծածէն աւելի ծանր կերպով վտանգուած է:

—Չեմ հասկնար, ըսաւ Զուիցերիացի վաճառական անանկ յուզուով մը որ իր կինը չկրցաւ սոսկումի շարժում մը զսպել:

—Լօւթիւն, յարեց Բերքինս, ահա խեղճ մայր: Գէթ պէտք է ենթադրէ որ իմ միակ նպատակս է իրեն ծառայել:

Գործակալատան սպասաւորն արդարեւ պատշգամին վրայ երեւցած էր: Տիկին Լիուի առջեւէն կը բալէր, որ մեծ դժուարութեամբ կը յառաջանար, նախ վասն զի ոտքերը վիրաւորուած էին երկրին սովորութեանը համեմատ, եւ երկրորդ որովհետեւ յոգնութենէ եւ յուզումէ ընկճուած էր:

Թերեւս առաջին անգամն էր որ գործակալատունէլու հիմնուելէն ի վեր բարեկիրթ չինուհի մը կը համարձակէր հոն մտնել: Մայրական սէրը ամեն կանխակալ կարծիք լուծուցած էր անոր մէջ:

Շատ բիշ փոյթն էր դարեւոր սովորոյթները որք ամեն յարաբերութիւն կարգիլէին օտարապաններու հետ: Իր ուղածը աղջկանը կեանքն էր, մնացածը հոգը չէր:

Սակայն, քանի մը քայլ առնելէ ետք գէպի խմբակը զոր կը կազմէին Բերքինս ու իր բարեկամները, մէկէնիմէկ կեցաւ, չը համարձակելով աւելի հեռուն ելլալ:

(Շարունակելի)

ԱԶԴ

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հեղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ.ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աեքսանդրիոյ «Արաքս» նուահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2¹¹ ֆրանք, Պուլիարիոյ և Ռուսմանիոյ մէջ ստանալ փափագողք գիմելու ևն մեր խմբագրութեան:

Печатница „Взаимность“ — Варна